

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների ընթացքում «Գյումրու Ուսանողական Խորհուրդ» ՀԿ-ն իրականացրել է ընտրական գործընթացի դիտարկում, մասնավորապես, «Ալյանս» քաղաքացիական նախաձեռնության շրջանակներում «ԳՈՒԽ» ՀԿ-ն Շիրակի մարզում իրականացրել է exit poll, որի արդյունքները մենք «Ալյանս» քաղաքացիական նախաձեռնության շրջանակներում հրապարակել ենք անմիջապես ընտրությունների ավարտից հետո (տես Աղյուսակ թիվ 1, 2): Միաժամանակ «ԳՈՒԽ» ՀԿ անդամները իրականացրել են դիտորդական առաքելություն:


«ԳՈՒԽ» ՀԿ դիտորդների կողմից արձանագրվել են բազմաթիվ ընտրախախտումներ, այդ թվում՝ կուտակումներ ընտրատեղամասերում, բացահայտ և համատարած ընտրակաշառքների բաժանում, պաշտոնական դիրքի չարաշահումներ, վարչական ապարատի ամբողջ ներուժի կիրառում, լցոնումներ և այլն, որոնք մեր կարծիքով ազդել են ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

«ԳՈՒԽ» ՀԿ նախագահությունը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել սույն թվականի փետրվարի 19-ին կայացած նախագահական ընտրությունները և օրենքով սահմանված կարգով նշանակել նոր ընտրություններ:

«ԳՈՒԽ» ՀԿ նախագահությունը փետրվարի 29-ին հրավիրել է արտահերթ խորհրդի նիստ, որի օրակարգում լինելու է «ԳՈՒԽ» ՀԿ հետագա գործողությունների պլանի նախաձեռնված մշակում, որը ներկայացվելու է հաստատման «ԳՈՒԽ» ՀԿ ուսանողական արտահերթ բաց համագումարին:


«Գյումրու ուսանողական Խորհուրդ» ՀԿ նախագահություն

ՀՀ նախագահական ընտրությունների ելքի Շիրակի մարզում հարցախույզի արդյունքները



Ընդհանուր հարցվածներ թիվը **630**
 Մերժումների թիվը **115**
 Պատասխանողների թիվը **525**

«Նախագահական ընտրությունների ելքը հարցախույզի արդյունքները Հայաստանում»



Ընդհանուր հարցվածների թիվը 4604
Մերժումների թիվը 1514
Պատասխանողների թիվը 3090

Ելնելով տվյալներից՝
 Ա. Բաղդասարյան - 15,339%
 Ա. Գեղամյան - 1,294%
 Տ. Կարապետյան - 1,229%
 Ա. Հարությունյան - 0,258%
 Վ. Հովհաննիսյան - 6,310%
 Վ. Մանուկյան - 2,912%
 Ա. Մելիքյան - 0,291%
 Ս. Սարգսյան - 35,08%
 Լ. Տեր-Պետրոսյան - 37,28%